

ԱԷՏԱՐԵՐ




“ՓՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1889

ԹԻԻ 8



ԵՄՈՒ

ԷՄՈՒ
 Էմու Աւստրալիոյ ամենէն խոշոր թռչունն է, և շայնամէն ետքը ամենէն խոշոր թռչունն է աշխարհիս մէջ: Ունի իբր 3 ոտք երկայնութիւն. շատ արագ կը վազէ, և հնար է հասնել անոր՝ միայն սրարչաւ ձիով որ վարժուած է հալածել զայն: Այս թռչունը քաջ լողացող ալ է, և շատ ան-

գամ շուրջ կը մտնէ երբ կը հալածուի: Ի մեծ դժբաղդութիւն Էմուին, անոր մորթը, անոր խիւ և թուխ փետուրները յարգի են իբրև վաճառք. և թռչունը կը սպաննուի ասոնց համար: Աւստրալիոյ բնիկը կ'ուտեն այ անոր միսը: Էմուին ուսեսան են պրտոյ ծառերու արմատներ և բանջարեղէններ: Էգ թռչունը վեց եօթը ձու-

կ'ածէ հողին մէջ խոռոչ մը փորելով: Իւր վարուժանը (արու թռչուն) թուխս կը նստի ձուերուն վրայ, և կը խնամէ ձագերը մինչև որ անոնք մեծնան զիրենք հոգալ կարող ըլլալու չափ:

ԿՈՐՍՈՒԱԾ

Ամերիկայի մէջ օր մը փոքրիկ տղայ մը ճամբայ ելաւ դպրոց երթալու: Դպրոցը զի զն էր, տղան առաջ բնաւ դացած չէր դպրոց. բայց հայրը ըսաւ անոր թէ ո՛ր ճամբէն երթալու էր: «Մնցիր կամս ըջէն, Ռոպերթ, և գնա շիտակ յառաջ և դպրոցը առջևդ կ'ելլէ. և յետոյ նորէն ատն եկուր երբ դպրոցը աւարտի:»


Ռոպերթ ճամբայ ելաւ, բայց անոր հայրը խորհեցաւ թէ գուցէ փոքրիկ տղան պիտի կենար ճամբուն վրայ կամ պիտի թափառէր աստ և անդ. և ուստի ըսաւ ինքնիրեն, «Ես Ռոպերթի ետեէն կը քայլեմ:» և սկսաւ երթալ անոր ետեէն միշտ աչքը անոր վրայ հաստատած: Ճամբան նոր էր, և երբ տղան եկաւ կամուրջին, նայեցաւ ջրին մէջ: Տեսաւ ծաղիկներ ջրին եզերքը, և գնաց դէպ ի անոնց կողմը: Քանի մը ուրիշ ծաղիկներ ալ կային քիչ մը անդին անտառին մէջ, և տղան գնաց դէպ ի անտառը: Աւելի անդին կար սկիւռ մը, և յետոյ տեսաւ թռչնոյ բոյն մը. և այսպէս հետզհետէ ավելի խոր կը մտնէր անտառը:

Ի վերջոյ խորհեցաւ տղան, «Ո՛ր եմ ես,» և նայեցաւ չորս կողմը, և ահա կորսուած էր ինք: Առդին ջանդին կը վազէր, բայց կորսուած էր: Սարսափով լեցուեցաւ: Մտաւ մացառի մը ետեւ և սկսաւ ողորմագին աղաղակել, «Ո՛հ, հայրիկ, հայրիկ:» Չայն մը եկաւ մացառին ետեէն. «Ի՞նչ է, Ռոպերթ:» Եւ ահա հօրը քայլը դէմքը որ անոր

հետևած էր բոլոր ճամբան, և փոքրիկ Ռոպէրթ իւր բազուկները փաթթելով հօրը պարանոցին, սկսաւ լալ:

«Ռոպէրթ, եթէ անգամ մըն ալ բան մը պատուիրեմ՝ քեզի, պիտի ընես»: «Այո, հայրիկ», ըսաւ տղան հեկեկալով, «այո, հայրիկ: Ո՛հ, հայրիկ, այս ի՞նչ աղէկ բան ըրիր իմ ետևէս քաշելով:»

Սիրելի տղաք, այսօր Երկնաւոր Հայրը կու գայ ուր որ դուք կ'երթաք: Մոլորած էք ուղիղ ճամբէն. չըրիք ինչ որ ձեզի պատուիրած է. և նա կը ցաւի ձեր վրայ ձեր կրած բոլոր նեղութեանց համար: Հիմա կու գայ ուր որ դուք կ'երթաք, եթէ փնտռէք զնա պիտի գտնէք, «վասն զի ով որ կը փնտռէ՝ կը գտնէ»:»




երկայն ըլլալէն յայտնի է թէ ծովուն յատակը շատ կամայ կամաց կը խտրուենայ: Առեաբերի փոքրիկ ընթերցողաց համար լողալ սորվելու շատ յարմար տեղ:

Արեւմտեան Աւստրալիոյ կիրճան շատ աղէկ է. անոր ծովեզերաց երկայնքովը տեղ տեղ կ'ըլլայ մարդարտի սրտորդութիւն որ է կարեւոր գործ մը այն կողմանց համար: Գիրք մը ուրիշ նշանաւոր բան մը կը յիշէ ըսելով, «Արեւմտեան Աւստրալիոցոց մեծ պարծանքն են վայրի ծագիկները որ կը ծածկեն անոնց դաշտերը գարնան եղանակին մէջ: Այն ժամանակ երկրին երեսը կը պատի ամենէն զեղեցիկ ծաղկանց անհուն զանազանութեամբ իբր թէ գոյնզգոյն գորգով (carpet): Ամէն ճեղքուած և պատառուած լի է ծաղիկներով:»



կը մօտենային. և ահա երեցան շուտով բոցավառ աշուրներով շատ մը գայլեր: Գայլերը կը մօտենային հետզհետէ: Գիտէր որ անոնք շատ անթի էին. և անշուշտ պիտի ուտէին զինք նաև իւր ընտիր գորշ ձին: Կրնաք երևակայել թէ մարդը ի՞նչպէս վտիցած ըլլալու է: Շոյեց իւր ձին և ըսաւ, «Հիմա, իմ սիրելի անասունս, վազէ կրցածիդ շափ արագ. եթէ դուն զիս չանցունես շատ արագ այս անասունն մէջէն, գայլերը պիտի պատառեն և ուտեն զիս: Եթէ ազատես զիս հիմա, ես քեզի միշտ բարեկամ պիտի ըլլա՛մ:»

Ձին անգամ մը վրնջեց, իբր թէ ըսել ուզելով, «Բոլոր կրցածս պիտի ընեմ», և յետոյ սկսաւ սրարշաւ վազել. մարդուն ուրիշ բան չէր մնար



ԱՒՊՐՆԻ

ՈՒՐԻՇ ԲԱՂԱԲ ՄԸ ԱՐԵՎՄՏԵԱՆ ԱՌՍՏՐԱԼՈՅ ՄԷՋ

Անցեալ ամիս դրինք Արեւմտեան Աւստրալիոյ գլխաւոր քաղաքին, Փէրթը. հիւպատկերը: Այսօր կը տեսնէք նոյն գաղթականութեան ուրիշ մէկ փոքր քաղաքին, Ալպընիի, պատկերը: Արեւմտեան Աւստրալիոյ հարաւային մասին մէջ շատ քիչ նաւահանգիստներ կան, բայց կը գտնուի ընտիր նաւահանգիստ մը որ ծովային պատերազմի մէջ շատ կարեւորութիւն ունի: Այս է Սք. Գէորգայ Ծրանձաղուտ կոչուածը որ երկու անցքերու միջոցաւ կը մտնէ ահագին ապառաժ պատուարներու մէջ, և կ'ընծայէ մեծ նաւահանգիստ մը ուր ամենէն խոշոր նաւերը կրնան խարխիս նետել կատարեալ ապահովութեամբ յոյժ փոթորկալից եղանակներուն: Այս ծանձաղուտին զըլուխը շինուած է Ալպընի: Եթէ կըրնանք դատել պատկերէն, գեղեցիկ տեղ է այն, և անոր նաւամատոյցին

ԳՈՐԾ ՁԻՆ ԵՒ ԱՐԻԱՐՈՒԹԵԱՆ ՁԱՆԳԱԿԸ (վեպ Գերմանական)

Ճամանակաւ մարդ մը ունէր շատ ընտիր ձի մը գորշ գունով: Ուր որ կը բնակէր նա, ոչ չուր եկառք կը զըտնուէր և ոչ հասարակ կառք որ ամենէն դնամէկ տեղէն միւսը: Ճամբան նեղ էր, և շատ անգամ կ'անցնէր մթին անտառներու մէջէ. ուստի մարդը միշտ կը հեծնար իւր գորշ ձին: Չմեռ օր մը ճամբայ ելաւ առտուանց կանուխ, և ըսաւ իւր կնոջ թէ պիտի չդառնար ետ մինչև չըլլար երեկոյ. վասն զի պիտի երթար իրենց տան ձախակողմն ինկող անտառին ծայրը: Շատ օրեր օդը ցուրտ գացած էր. գետինը սառտիկ սառած էր. և անտառին մէջ գրտնուող բոլոր կենդանիք ուտելու բան մը չէին կրնար գտնել: Մութը բոլորովին կոխելէն ետքը ճամբայ ելաւ մարդը գէպի տուն դառնալու համար. և մինչ կ'երթար ձին հեծած, լսեց ոռնալու ձայներ որ հետզհետէ

ընել, բայց եթէ ձիուն վրայ փակչիլ: Ձին գրեթէ կը թռչէր և հետզհետէ աւելի արագ. կը թուէր թէ բոլոր ծառերը հակառակ կողմը կը վազէին. և հետզհետէ գայլերուն ոռնալու ձայները հեռին կը մնային, վասն զի անոնք չէին կրնար ձիուն չափ արագ վազել:

Յետոյ քիչ ատենէն մարդը տեսաւ իւր ամն լոյսերը. և սիրար հանգչեցաւ: Այնուհետև, որսը որ պատահէր՝ կըսէր, «Այս ձին ազատեց իմ կեանքս. պէտք է որ անոր շինեմք ընդարձակ ախոտ մը, ամառ անոր ընտիր գարի, և մաքուր յարգէ անկողին պատրաստենք ամէն գիշերուան համար: Ես իմ ձեռքովս պիտի հոգամ անոր պէտքը և դարմանեմ, մաքրեմ զնա ամէն օր:»

Ճամանակ մը մարդը ինքն եղաւ անոր ձիադարմանը, և վարուեցաւ աշտոյն հետ նման սիրելի բարեկամի: Բայց ձին պաղ առած էր այն գիշերը երբ աղատեց իւր տէրը, և կուրցան աշուր

ԿԱՊԻԿՆԵՐԷ ԿԱՄՈՒՐՁ

Քննական դիտութեան վրայ ճառող գիրքի մը մէջ հեղինակը կը նկարագրէ կենդանի կամուրջ մը որ ձգուած էր Ամազոն գետոյն մէջ թափող փոքր հոսանաց մէկուն վրայ: Յիշեալ անձը ինկած կը քնանար իւր ակտուն մէջ նստուն տախտակամածին վրայ: Բայց ահա արթնցաւ իւր երեսին սաստիկ հարուած մը տալով: Վեր նայելով տեսաւ առաւօտեան մօտ կանուխ աղօտ լուոյ մէջ հսկայ պարանի նման բան մը որ կախուած էր ծառերէն, և կը շարժէր կ'օրուէր մթան մէջ:

Որովհետեւ առաւօտը կը մօտենար, կ'ըսէ յիշեալ հեղինակը, շուտով կրնայի դիտել անոնց մէն մի շարժումը: Կապիկներուն ամենէն զօրաւորներէն և խոշորներէն երեքը կամ չորսը ծայրը կը կենային, ճիշդ ինչպէս կամուրջներուն երկու ծայրերը կը դուրին ամուր և հաստատուն կը բանիթ սիւներ: Ասոնք արմաւենոյ ճիւղերը կը բռնեն իրենց ստուրնէրով, ազիներով և ձեռուներով. այնուհետեւ ուրիշ երկու կապիկներ կը բռնեն զանոնք նոյն կերպով, և այսպէս ուրիշներ ալ կ'աւելնան առաջիններուն վրայ հետզհետէ նոյն կերպով մինչև որ ի վերջոյ կապիկներէ պարան մը կամ օրուող սիւն մը կախուի ճիւղէն:

Հիմա ուրիշներ ալ կը կցուին ասկէ անկէ մինչև որ երեք կամ չորս ոտք թանձր և երեսուն ոտք երկայն սիւն մը ձևանայ ծառին բունին քով կախուած: Երբ սիւնը մինչև գետին հասնի, ամենէն ծայրը գետինին մօտ գանուող կապիկը որ բռնուած է միւսներէն և որոյ բազուկներն ազատ են, կը սխի ծառին դէմ զարնուելով ետ և առաջ շարժիլ. շարունակելով այսպէս՝ ի վերջոյ սիւնը ամբողջ կը սկսի օրուիլ ծանր ծանր, և ահա այս շարժումներուն ժամանակն էր հաւանականապէս որ ինծի զարնուեցաւ կապիկներէ շինուած այս սիւնը և զիս արթնցոց քնէս:

Բայց կը թուէր թէ կապիկները դիտէին թէ իրենք ինչ կ'ընէին, և թէ բոլորովին կը վստահէին ծայրը գանուող կապիկին, որ էր ծառին դէմ զարնուելով իրենց կազմած սիւնը շարժող օրողը. և ամէն անգամ որ կ'օրուէր սիւնը կ'աւելնար ծառէն հեռաւորութիւնը, և մինչև այնչափ եղաւ որ ծայրի կապիկը ջրէն անդին գանուած ոտի մը մօտենա-

լով՝ բռնեց զայն, և այսպէս կատարելագործուեցաւ կամուրջը: Կապիկները այս յաջողութեան վրայ մեծ ուրախութեան նշան կը ցուցնէին, վասն զի ամբողջ սեան մէկ ծայրէն միւսը գանուողները կարկաշելու նման ձայներ կը հանէին: Բայց անպատեհ անապարանք չցուցին. և այն ինչ ծայրի կապիկը բռնեց միւս ծառին այն ոտը, հակառակ ծայրէն երկու կապիկներ շուտով սեան վրայէն անցնելով հասան անոր քով, և կեցան հոն իրենք ալ ոտակն բռնելով՝ ամբողջուեցաւ համար կամուրջին ծայրը:

Այնուհետեւ իբր թէ ծանուցում եղաւ թէ կամուրջը բացուած էր. վասն զի կարկաշող և ճշող բազմութիւն մը սկսաւ անցնիլ կամուրջին վրայէն, ոմանք չորս ոտքով, ոմանք ետևի ոտից վրայ քալելով, և շարժելով իրենց երկայն ազիները, մինչ մայր կապիկները կը տանէին իրենց ձագերը, և ամէնքն ալ կ'աճապարէին հիմա անցնիլ կամուրջէն և յետոյ քակել զայն:

Շատ ծեր երեւոյթով կապիկ մը որ անցնողներուն մէջ ամենէն ետքը մնացած էր, կը քալէր կամուրջին վրայէն շատ զգուշաւոր կերպով, այնպէս որ ետ չկրնայով զսպել զիս ծիծաղեցոյ բարձրաձայն. ասոր վրայ տեղի ունեցաւ հետաքրքրական տեսարան մը: Երբ կապիկը գրեթէ կորսնցոյ իւր հաւատարակչութիւնը, վասն զի մէկ ծայրը գանուող կապիկները թող տակն իրենց բռնած ոտները, և ամբողջ կամուրջը դարձեալ սեան ձև առաւ և սկսաւ օրուիլ: Այն վայրկենին որ սիւնը ջուրէն անցաւ, իւրաքանչիւր կապիկ թտեցաւ թէ թող տուաւ իւր բռնած տեղը, և ինկան հոս հոն, և վազելով երան ծառերուն բարձր ծայրերը բարձրաձայն կարկաշելով և աղաղակելով իրենց բարկութենէն և երկիւղէն: Ինչ պիտի ընէին արդեօք թէ՛ անաջ վրդովի զանոնք. չեմ գիտեր, բայց անոնքմէ ոմանք հաւանականապէս վար պիտի իյնային:



ԿԵՆՊԱՆԵԱՅ ԲԱՐԵԿԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Թհմաս Բէ անուն երկաթագործ մը սև երեսով վազրիկ գառնուկ մը գընեց և դրաւ զայն դաշտի մը մէջ ուր կը գանուէին նաև կով մը և փռքրիկ ձի մը: Գառնուկը ուշագրութիւն չըրաւ կովուն, բայց շուտով սկսաւ մեծ սէր ցուցնել ձիուն: ձին ալ անոր սէր կը ցուցնէր փոխադարձաբար, և այս երկու բարեկամք միշտ իրարու կ'ընկերանային: Երբ ձին կը գործածուէր հեծնելու կամ կառք քաշելու, գառնուկը կը վազէր անոր քովէն, և երբ գառնուկը կը ներուէր զինք տեսնելու համար իրեն շատ մօտեցող մարդոց մէ, կը վազէր կը մանէր ձիուն փորին ներքեւ, և իւր սև երեսով կը նայէր անոր առջևի ոտքերուն մէջտեղէն, համարելով ինքզինք սպասով: Գի-


շերները գառնուկը կը քնանար ակտուն մէջ, և եթէ գառնուկը ձիէն, ուղորմագին կը մայրէ, որուն կը պատասխանէր ձին ողբաձայն խրխիւնջներով: Եւ ճիշդ ինչպէս որ շուն մը կը թողու իւր սեռէն եղող ընկերները և կ'երթայ մարդու ետևէ, այս գառնուկն ալ կը թողուր իւր սեռէ կենդանիները որպէս զի ընկերանար իւր բարեկամին: Չոր օրինակ, անգամ մը երբ երկաթագործը ձին հեծած կ'երթար, և գառնուկը իւր սովորութեան պէս կը վազէր անոր քովէն, ահա ոչխարաց մեծ հօտ մը անցաւ ճամբայէն. գառնուկը բնաւ ուշագրութիւն չըրաւ ոչխարներուն, այլ անոնց մէջէն քալեց ձիուն հետ: Ուրիշ ժամանակ մը թէ՛ ձին և թէ՛ գառնուկը մուրեցան մերձակայ դաշտին մէջ ուր կ'արածուէր ոչխարաց հօտ մը: Գառնուկը միացաւ ոչխարներուն իւրմերին հետ, կարճ ատեն մը, բայց երբ երկաթագործն եկաւ ձին դուրս հանելու անկէ, գառնուկն անմիջապէս հեռուեցաւ անոր առանց անգամ մը իսկ ետ նայելու իւր բնական ընկերներուն, այսինքն՝ ոչխարներուն:



ԹՈՒՌԱՆԱԿԱՆ ՀԱՆՆԼՈՒԿ ՄԸ

Հոս կայ ինդիք մը զոր գտանք Ամերիկեան թերթի մը մէջ. ո՞ր տղան կամ աղջիկը որ անոր ամենէն պարզ լուծումը կը զրկէ մեզի, պիտի դնենք զայն ՏՆՅՆՅՈՒՄ Աւետարեբի հետագայ թիւերէն միոյն մէջ հանդերձ ինդիքը լուծողին անունով:

Երկու կանայք ունէին երեսունական վառեակ զորս տարին չուկայ: Միտքան որոշեցին հաւատարակէ բաժնել իրենց մէջ ինչ արդիւնք որ գոյանար: Կանանց մին ծախեց իւր վառեակները երկուքը մէկ տղարի, և ստացաւ 13 տղար: Միւսը ծախեց իրենները՝ երեքը մէկ տղարի, և իւր երեսուն վառեակներուն փոխարէն ըստացաւ 10 տղար: Ըսել է 25 տղար վաթսուն վառեակներուն փոխարէն: Վաճառականնէն ինդիքուելով բաժնել ստակն անոնց բաւ. «Գուն քու երեսուն վառեակը ծախեցիր երկուքը մէկ տղարի, և դուն քու երեսուն վառեակը ծախեցիր երեքը մէկ տղարի. ըսել է վաթսուն վառեակին հինգը 2 տղարի: Արդ, հինգը վաթսունին մէջ կայ տասներկու անգամ, և տասներկու անգամ 2 տղար կ'ընէ 24 տղար: Արեմն ձեր վառեակները 24 տղար բերին»: Բայց կանայք 25 տղար ունէին իրենց ձեռքը: Այս թիւը սխալ է թէ ոչ:

Ամերիկայի Միտինսոյց ընկերութեան գրքին,
Արտօնատէր Զ. Գ. ԿՐԹ
Տնօրէն—Միտիքի Զ. Ս. ՊԱՐԵՆՍ
Յիննանձնաւոր Եղևուշու

ԿՈՍՏԱՆԴՆՈՎՈՒԹՅՈՒՆ
Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՌՈՒ ԳՈՅԱՅԵԱՆ